"ARMENIAN DEVELOPMENT BANK"
OPEN JOINT-STOCK COMPANY

"АРМЯНСКИЙ БАНК РАЗВИТИЯ"
ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

«ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

## «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

## ՈՐՈՇՈՒՄ

22.04.2011 թիվ 01-04

«Զարգացման Բանկ» ԲԲԸ բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինների վճարման մասին

«Զարգացման Բանկ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և «Զարգացման Բանկ» ԲԲԸ կանոնադրության (նոր խմբագրությամբ) պահանջները,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Զարգացման Բանկ» ԲԲԸ 2010թ. գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթից հասարակ անվանական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարել:

2. «Զարգացման Բանկ» ԲԲԸ 2010թ. գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթից արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումն իրականացնել 2011թ. մարտի 09-ի դրությամբ կազմված բաժնետերերի ցուցակում նշված արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին, համաձայն «Զարգացման Բանկ» ԲԲԸ կանոնադրության 32-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված բանաձևով կատարված հաշվարկների, 2011թ. հունիսի 01-ից մինչև 2011թ. սեպտեմբերի 01-ը ժամանակահատվածում:

3. Սույն որոշումն ընդունվել է միաձայն և ուժի մեջ է ընդունման պահից:

**ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**